



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ**

№՝ 1029-Ա/2

« 18 » 10 2016թ.

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0215.03.5 «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0215.03.01.5 «ԴԱՍԱՎԱՆԴՈՂ՝
ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԶԱՓՈՐՈՇԻԶԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ՝ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. օգոստոսի 10-ի N 777-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական

առարկաների» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման պետական կրթական չափորոշիչը մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկման նպատակով ուսումնական հաստատություններում ներդնել 2017թ. սեպտեմբերի 1-ից:

3. Նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետին. մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատման ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման պետական կրթական չափորոշիչը:

4. Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին. ապահովել չափորոշիչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից վերլուծական հաշվետվությունների ստացումը:

5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:



ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
«18» հոկտեմբերի 2016 թ -ի
N 1029-Ա/2 հրամանի

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0215.03.5 «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0215.03.01.5 «ԴԱՍԱՎԱՆՊՈՂ՝ ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ»
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորմանը ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվաճառության նվազագույն և առավելագույն ծավալները:

2. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝

1) առկա

2) դրսեկություն (էքստեռնատ):

3. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով.

ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 4 տարի

բ. հիմնական կրթության հիմքով՝ 4 տարի

2) դրսեկության (էքստեռնատ) ձևով կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագիրը հիմնական կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 5148 ժամ է, առավելագույն ծավալը՝ 8640 ժամ:

ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0215.03.5 «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0215.03.01.5 «ԴԱՍԱՎԱՆԴՈՂ՝ ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) մանկական երաժշտական դպրոցներում, արվեստի դպրոցներում, լրացուցիչ կրթության հաստատություններում «Սոլֆեջիո» և «Երաժշտական գրականություն» դասավանդող,

2) համերգներ վարող,

3) երաժշտական թղթակցի գործունեություն իրականացնող:

7. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) իրականացնել մանկավարժական գործունեություն և ուսումնամեթոդական աշխատանքներ մանկական երաժշտական դպրոցներում, արվեստի դպրոցներում, հատուկ մասնագիտական կրթության հաստատություններում, լրացուցիչ կրթության հաստատություններում,

2) կիրառել երաժշտության, հոգեբանության և մանկավարժության բնագավառների պատմատեսական գիտելիքները մանկավարժական գործունեությունում,

3) կիրառել ուսումնական գործընթացի կազմակերպման և վերլուծության, դասի նախապատրաստման և անցկացման մեթոդների վերաբերյալ գիտելիքները դասավանդման գործընթացում,

4) յուրացնել հիմնական ուսումնական երկացանկը,

- 5) ուսումնական գործընթացում կիրառել դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները,
- 6) մշակել և կիրառել անհատական մեթոդներ և աշխատանքի ձևեր՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները,
- 7) պլանավորել սովորողների մասնագիտական ունակությունների զարգացմանն ուղղված աշխատանքը,
- 8) մշակել բանախոսական համերգային ծրագրեր՝ հաշվի առնելով տարբեր տարիքային խմբերի ունկնդիրների ընկալման առանձնահատկությունները,
- 9) վարել համերգներ, մշակութային միջոցառումներ,
- 10) կատարել երաժշտական ստեղծագործության պատմատեսական, գեղագիտական և կատարողական վերլուծություն, կիրառել մասնագիտական համալիր գիտելիքները՝ համերգային ծրագրերի մեկնաբանման գործընթացում,
- 11) տիրապետել բանավոր և գրավոր խոսքի մշակույթին, մասնագիտական տերմինաբանությանը,
- 12) կիրառել մասնագիտական, հոգեբանա-մանկավարժական բազային գիտելիքները՝ հաշվի առնելով մանկավարժական և ստեղծագործական կոլեկտիվների գործունեության առանձնահատկությունները:
- 13) հավաքել երաժշտական մշակույթի և արվեստի բնագավառում իրադարձությունների և երևույթների վերաբերյալ տեղեկատվական նյութեր՝ զանգվածային լրատվության միջոցներում (ՁԼՄ) օգտագործման նպատակով,
- 14) հավաքել և մշակել երաժշտական մշակույթի իրադարձությունների և երևույթների վերաբերյալ նյութեր՝ օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները,
- 15) կատարել երաժշտական ստեղծագործության պատմատեսական, գեղագիտական և կատարողական վերլուծություն, կիրառել բազային երաժշտատեսական գիտելիքները՝ երաժշտական թղթակցի գործունեությունում:

ԳԼՈՒԽ 3.

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0215.03.5 «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»
 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0215.03.01.5 «ԴԱՍԱՎԱՆԴՈՂ՝ ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ»
 ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ
 ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

8. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական

ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:

9. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝

1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,

2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,

3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,

4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,

5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,

6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,

7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,

8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,

9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,

10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

ԳԼՈՒԽ 4.

0215.03.5 «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0215.03.01.5 «ԴԱՍԱՎԱՆԴՈՂ՝ ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:

11. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝

1) իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ իրավական ակտերի հիմնական դրույթները,

2) տիրապետի հայոց լեզվին,

3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով,

4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,

5) գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,

6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:

8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական

աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի հավելված 1-ի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի հավելված 1-ի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

ԳԼՈՒԽ 5.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0215.03.5 «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0215.03.01.5 «ԴԱՍԱՎԱՆԴՈՂ՝ ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման

հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, ծայնադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցներ:

16. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

- ա. լեզուների,
- բ. պատմության,
- գ. բնագիտական առարկաների,
- դ. երաժշտատեսական առարկաների,
- ե. հումանիտար առարկաների,
- զ. նախնական զինվորական պատրաստության,
- է. համակարգչային,
- ը. մեթոդական,
- թ. ուսուցման տեխնիկական միջոցների,
- ժ. գրադարան,
- ժա. ծայնադարան,
- ժբ. տեսադարան:

2) Մասնագիտացված լսարաններ՝

- ա. խմբակային պարապմունքների,
- բ. անհատական պարապմունքների մեկ ոռյալով,
- գ. անհատական պարապմունքների երկու ոռյալով,
- դ. նվագախմբի/ համույթի,
- ե. ուսումնական և համերգային դահլիճներ

3) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ,

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերի համար սահմանվում է ուսումնական պլաններով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը.

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում,

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,

2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,

3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,

4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման մասնագետի համար սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0215.03.5 «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0215.03.01.5 «ԴԱՍԱՎԱՆԴՈՂ՝ ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով հավելված 1-ի 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,

2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,

6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,

7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

8) պետք է սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

Հավելված 1

Միջին մասնագիտական կրթության 0215.03.5
 «Երաժշտության տեսություն» մասնագիտության 0215.03.01.5
 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների»
 որակավորման պետական կրթական չափորոշիչի
 Աղյուսակ 1

**Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության
 0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագրի
 առանցքային հմտությունների մոդուլներ**

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»

1.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-16-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի՝ համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
7.	Կատարման չափանիշներ	1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,

		<p>2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն),</p> <p>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը</p> <p>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):</p>
8.	Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
9.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,</p> <p>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</p> <p>3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,</p> <p>4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,</p> <p>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:</p>
10.	Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
11.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք,</p> <p>2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,</p> <p>3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուններ և այլն),</p> <p>4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,</p> <p>5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:</p>
12.	Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում

13.	Կատարման չափանիշներ	1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
14.	Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
15.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անհմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
16.	Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում
17.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»		
18.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-16-001

19.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ
20.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
21.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
22.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
23.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
24.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 5) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
25.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
26.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն) 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները,
27.	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ

28.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
29.	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
30.	Կատարման չափանիշներ	<p>1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</p> <p>2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</p> <p>3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</p> <p>4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</p> <p>5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</p> <p>6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կտրվածքների դեպքում,</p> <p>7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»		
31.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-16-001
32.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը
33.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
34.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
35.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

36.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
37.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
38.	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
39.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
40.	Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
41.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
42.	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում

43.	Կատարման չափանիշներ	<p>1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հաստատիրոջ,</p> <p>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</p> <p>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
44.	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
45.	Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>

**Միջին մասնագիտական կրթության 0215.03.5 «Երաժշտության տեսություն» մասնագիտության
0215.03.01.5 «Դասավանդող՝ երաժշտատեսական առարկաների» որակավորման հիմնական կրթական ծրագրի
ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ**

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈԼՖԵԶԻՈՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»		
1.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-001
2.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել երաժշտական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի, սոլֆեջիոյի դասավանդման մեթոդների վերաբերյալ գիտելիքներ, աշխատանքային գործընթացում դրանք կիրառելու ստեղծագործական հմտություններ
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ԵՐՏ-5-16-007 «Երաժշտության տարրական տեսություն» մոդուլի ուսումնասիրությունը:
5.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
6.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ուսումնական գործընթացի սկզբնական փուլի աշխատանքները և դասի անցկացման ձևերը
7.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում «Սոլֆեջիո» առարկայի նշանակությունը երաժշտական դպրոցում, 2) ճիշտ է ներկայացնում երաժշտական դպրոցի ընդունելության մուտքային պահանջները, երաժշտական տվյալների (երաժշտական լսողություն, երաժշտական հիշողություն, ռիթմի զգացողություն) որոշման մեթոդները, 3) ճիշտ է ներկայացնում «Սոլֆեջիո» առարկայի կրթական ծրագիրը երաժշտական դպրոցում, 4) ճիշտ է ներկայացնում տարեկան, կիսամյակային և օրացույցային թեմատիկ պլան կազմելու սկզբունքները, 5) ճիշտ է ընտրում դասին անհրաժեշտ երաժշտական նյութերը, օգտագործվող ուսուցողական և

		մեթոդական ձեռնարկները:
8.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել սոլֆեջիոյի դասավանդման գործընթացը, դասի անցկացմանն օժանդակող աշխատանքային ձևերը:
9.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում գործնական պարապմունքների անցկացման եղանակները, 2) ճիշտ է ներկայացնում դասի անցկացման ընդհանուր պլանը, աշխատանքի բաժանումն ըստ ժամանակի, 3) ճիշտ է ներկայացնում տեսական նյութի մատուցման մեթոդները, 4) ճիշտ է ներկայացնում մաքուր ինտոնացիայով ձայնարտաբերմանն ուղղված աշխատանքի մեթոդները, 5) ճիշտ է ներկայացնում լսողական վերլուծության հմտություններ զարգացնելու ձևերը, 6) ճիշտ է ներկայացնում երաժշտական թելադրություն գրելու հմտություններ զարգացնելու մեթոդները, 7) ճիշտ է ներկայացնում մետրառոխթմի զգացումը զարգացնելու մեթոդները, 8) ճիշտ է ներկայացնում ստեղծագործական կարողությունների զարգացման մեթոդները, 9) ճիշտ է ներկայացնում հարցման և գնահատման չափանիշները, 10) ճիշտ է ներկայացնում նոր նյութի մատուցման մեթոդները, 11) ճիշտ է պատկերացնում տնային հանձնարարությունների դերը աշխատանքային գործընթացում՝ իբրև նյութի ամրապնդման միջոց, 12) ճիշտ է վերլուծում ունկնդրված և սեփական դասերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՄԸ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ �ԱՍՏԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»		
10.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-002
11.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել երաժշտական դպրոցների ուսումնադաստիրարակազմական գործընթացի, «Երաժշտական գրականություն» առարկայի դասավանդման մեթոդների վերաբերյալ գիտելիքներ և աշխատանքային գործընթացում դրանք կիրառելու ստեղծագործական հմտություններ
12.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
13.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ԵՐՏ-5-16-007 «Երաժշտության տարրական տեսություն», ԵՐՏ-5-16-012 «Արտասահմանյան երաժշտական գրականություն» մոդուլների ուսումնասիրությունը:
14.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման

		չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
15.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել «Երաժշտական գրականության» առարկայի դասավանդման գործընթացի սկզբնական փուլի աշխատանքները
16.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում «Երաժշտական գրականության» առարկայի նշանակությունը երաժշտական դպրոցում, 2) ճիշտ է ներկայացնում առարկայի կառուցվածքն ու բովանդակությունը, 3) ճիշտ է ներկայացնում գործնական պարամունքների անցկացման եղանակները, 4) ճիշտ է պլանավորում դասավանդման պրոցեսը և դասի կառուցվածքը, 5) ճիշտ է կազմում դասի օրացույցային թեմատիկ պլան:
17.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել «Երաժշտական գրականության» առարկայի դասավանդման գործընթացը և անցկացման օժանդակող ձևերը
18.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում երաժշտապատմական ժամանակաշրջանները, երաժշտարվեստի ուղղությունները (ըստ ժամանակագրության) և ժանրերը (ծագումը, զարգացումը), 2) դրսևորում է երաժշտական արվեստի երևույթները հետաքրքրաշարժ ներկայացնելու կարողություն (պատմել, ցուցադրել երաժշտական նյութ, առնչվող նյութեր), 3) ճիշտ է ներկայացնում կոմպոզիտորների ստեղծագործական դիմանկարները, ստեղծագործությունները, 4) կարողանում է դաշնամուրով կատարել երաժշտական օրինակներ, 5) կարողանում է ներկայացնել ստեղծագործությունների վերլուծությունը (ձևը, բովանդակությունը, գեղագիտությունը, երաժշտական լեզվի առանձնահատկությունները)՝ հաշվի առնելով լսարանի տարիքային, հոգեբանական և այլ առանձնահատկություններ, 6) ճիշտ է ներկայացնում նոր երաժշտական հասկացությունները և տերմինները, 7) կարողանում է կազմակերպել լսարանը, ներգրավել աշակերտներին դասապրոցեսի մեջ, 8) ճիշտ է կազմակերպում երաժշտություն ունկնդրման պրոցեսը, 9) կարողանում է զարգացնել աշակերտի մոտ երկարատև կենտրոնացած լսողական ուշադրությունը, 10) ձևավորում է աշակերտների մոտ պատմողական հմտություններ, վերլուծական մտածողություն,

		<p>11) ձևավորում է աշակերտների մոտ գեղագիտական ճաշակ,</p> <p>12) ճիշտ է ներկայացնում հարցման և գնահատման չափանիշները</p> <p>13) ճիշտ է ներկայացնում նոր նյութի մատուցման մեթոդները,</p> <p>14) ճիշտ է վերլուծում ունկնդրված և սեփական դասերը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»		
19.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-003
20.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ զարգացնել ուսանողի դաշնամուրային կատարողական ունակությունները, ձևավորել թերթից հանպատրաստից ընթացման, սիմֆոնիկ, օպերային, խմբերգային, կամերային երաժշտության դաշնամուրային փոխադրումների կատարման, անսամբլային և նվագակցային ունակություններ, երաժշտական ստեղծագործության՝ ինքնուրույն ուսումնասիրման հմտություններ, ձևավորել երաժշտական ճաշակ, ստեղծագործական մտածողություն:
21.	Մոդուլի տևողությունը	284 ժամ
22.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
23.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
24.	Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել դաշնամուրի կատարողական առանձնահատկություններին, կատարել գամմաներ, վարժություններ, երաժշտական ստեղծագործություններ, տիրապետել բեմական կեցվածքի և պահվածքի հիմնատարրերին
25.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է կատարել գամմաներ, վարժություններ,</p> <p>2) ճիշտ է հանպատրաստից ընթերցում թերթից երաժշտական օրինակներ (ստեղծագործություններ կամ դրանց հատվածներ)</p> <p>3) կարողանում է կատարել հետևյալ ժանրերի երաժշտական ստեղծագործություններ՝</p> <p style="padding-left: 40px;">ա. պոլիֆոնիկ ստեղծագործություն</p> <p style="padding-left: 40px;">բ. մեծ կտավի ստեղծագործություն կամ պիես</p> <p style="padding-left: 40px;">գ. էտյուդ</p>

		<p>(Նվազացանկն ընտրվում է դասավանդող դասախոսի կողմից՝ համաձայն ուսումնամեթոդական խորհրդի կողմից հաստատված օրինակելի նվազացանկի բարդության աստիճանի՝ հաշվի առնելով ուսանողի ընդհանուր պատրաստվածության աստիճանը, նախասիրությունները: Յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի համար ուսումնամեթոդական խորհուրդը սահմանում է նաև յուրաքանչյուր ժանրի ստեղծագործությունների՝ պահանջվող անհրաժեշտ քանակը),</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում (բացատրում նշանակությունը) և կատարում երաժշտական տեքստում առկա տեմպային, դինամիկ և հնչերանգային նշումները,</p> <p>5) ճիշտ է օգտագործում ոտնակները,</p> <p>6) տիրապետում է բեմական կեցվածքի և պահվածքի հիմնատարրերին:</p>
26.	Ուսումնառության արդյունք 2	<p>Կատարելագործել դաշնամուրային կատարողականությունը, կատարել գամմաներ, վարժություններ, երաժշտական ստեղծագործություններ, երաժշտական կատարման ընթացքում դրսևորել բեմական կեցվածք և պահվածք</p>
27.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է կատարել գամմաներ, վարժություններ,</p> <p>2) ճիշտ է հանպատրաստից ընթերցում թերթից երաժշտական օրինակներ,</p> <p>3) կարողանում է կատարել տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործություններ, այդ թվում՝</p> <p>ա. պոլիֆոնիկ ստեղծագործություն</p> <p>բ. մեծ կտավի ստեղծագործություն</p> <p>գ. պիես</p> <p>դ. էտյուդ</p> <p>ե. ստեղծագործության փոխադրում 4 ձեռքով դաշնամուրի համար և/կամ նվագակցություն*</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում (բացատրում նշանակությունը) և կատարում երաժշտական տեքստում առկա տեմպային, դինամիկ և հնչերանգային նշումները,</p> <p>5) ճիշտ է օգտագործում ոտնակները,</p> <p>6) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է երաժշտական ստեղծագործության կերպարային նկարագրի ընկալում,</p>

		<p>7) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է բեմական կեցվածք և պահվածք:</p> <p>* Դաշնամուրային փոխադրումների ցանկում գերադասելի է ընդգրկել ստեղծագործություններ՝ ՄԵԴ-երի «Երաժշտական գրականություն» առարկայի երաժշտական նյութից</p>
28.	Ուսումնառության արդյունք 3	<p>Կատարելագործել դաշնամուրային կատարողականությունը, կատարել գամմաներ, վարժություններ, երաժշտական ստեղծագործություններ, երաժշտական կատարման ընթացքում դրսևորել բեմական կեցվածք և պահվածք</p>
29.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է կատարել գամմաներ, վարժություններ,</p> <p>2) ճիշտ է հանպատրաստից ընթերցում թերթից երաժշտական օրինակներ,</p> <p>3) կարողանում է կատարել տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործություններ, այդ թվում՝</p> <p>ա. պոլիֆոնիկ ստեղծագործություն</p> <p>բ. մեծ կտավի ստեղծագործություն</p> <p>գ. պիես</p> <p>դ. էտյուդ</p> <p>ե. ստեղծագործության փոխադրում 4 ձեռքով դաշնամուրի համար և/կամ նվագակցություն</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում (բացատրում նշանակությունը) և կատարում երաժշտական տեքստում առկա տեմպային, դինամիկ և հնչերանգային նշումները,</p> <p>5) ճիշտ է օգտագործում ոտնակները,</p> <p>6) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է երաժշտական ստեղծագործության կերպարային և ոճային նկարագրի ընկալում,</p> <p>7) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է բեմական կեցվածք և պահվածք:</p>
30.	Ուսումնառության արդյունք 4	<p>Կատարելագործել դաշնամուրային կատարողականությունը, կատարել գամմաներ, վարժություններ, երաժշտական ստեղծագործություններ, երաժշտական կատարման ընթացքում դրսևորել բեմական կեցվածք և պահվածք</p>
31.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է կատարել գամմաներ, վարժություններ,</p> <p>2) ճիշտ է հանպատրաստից ընթերցում թերթից երաժշտական օրինակներ,</p>

		<p>3) կարողանում է կատարել տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործություններ, այդ թվում՝</p> <p>ա. պոլիֆոնիկ ստեղծագործություն</p> <p>բ. մեծ կտավի ստեղծագործություն</p> <p>գ. պիես</p> <p>դ. էտյուդ</p> <p>ե. ստեղծագործության փոխադրում 4 ձեռքով դաշնամուրի համար և/կամ նվագակցություն</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում (բացատրում նշանակությունը) և կատարում երաժշտական տեքստում առկա տեմպային, դինամիկ և հնչերանգային նշումները,</p> <p>5) ճիշտ է օգտագործում ոտնակները,</p> <p>6) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է երաժշտական ստեղծագործության կերպարային, ոճային և գեղագիտական նկարագրի ընկալում,</p> <p>7) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է բեմական կեցվածք և պահվածք:</p>
32.	Ուսումնառության արդյունք 5	<p>Կատարելագործել դաշնամուրային կատարողականությունը, կատարել գամմաներ, վարժություններ, երաժշտական ստեղծագործություններ, երաժշտական կատարման ընթացքում դրսևորել արտիստիզմ</p>
33.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է կատարել գամմաներ, վարժություններ,</p> <p>2) ճիշտ է հանպատրաստից ընթերցում թերթից երաժշտական օրինակներ,</p> <p>3) կարողանում է կատարել տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործություններ, այդ թվում՝</p> <p>ա. պոլիֆոնիկ ստեղծագործություն</p> <p>բ. մեծ կտավի ստեղծագործություն</p> <p>գ. պիես</p> <p>դ. էտյուդ</p> <p>ե. անսամբլ և/կամ նվագակցություն</p> <p>զ. ստեղծագործության փոխադրում 4 ձեռքով դաշնամուրի համար</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում (բացատրում նշանակությունը) և կատարում երաժշտական տեքստում առկա տեմպային, դինամիկ և հնչերանգային նշումները,</p>

		<p>5) ճիշտ է օգտագործում ոտնակները,</p> <p>6) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է երաժշտական ստեղծագործության կերպարային, ոճային և գեղագիտական նկարագրի ընկալում,</p> <p>7) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է արտիստիզմ:</p>
34.	Ուսումնառության արդյունք 6	Կատարելագործել դաշնամուրային կատարողականությունը, կատարել գամմաներ, վարժություններ, երաժշտական ստեղծագործություններ, երաժշտական կատարման ընթացքում դրսևորել արտիստիզմ
35.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է կատարել գամմաներ, վարժություններ,</p> <p>2) ճիշտ է հանպատրաստից ընթերցում թերթից երաժշտական օրինակներ,</p> <p>3) կարողանում է կատարել տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործություններ, այդ թվում՝</p> <p>ա. պոլիֆոնիկ ստեղծագործություն</p> <p>բ. մեծ կտավի ստեղծագործություն</p> <p>գ. պիես</p> <p>դ. էտյուդ</p> <p>ե. անսամբլ և/կամ նվագակցություն</p> <p>զ. ստեղծագործության փոխադրում 4 ձեռքով դաշնամուրի համար</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում (բացատրում նշանակությունը) և կատարում երաժշտական տեքստում առկա տեմպային, դինամիկ և հնչերանգային նշումները,</p> <p>5) ճիշտ է օգտագործում ոտնակները,</p> <p>6) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է երաժշտական ստեղծագործության կերպարային, ոճային և գեղագիտական նկարագրի ընկալում,</p> <p>7) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է արտիստիզմ:</p>
36.	Ուսումնառության արդյունք 7	Կատարելագործել դաշնամուրային կատարողականությունը, կատարել գամմաներ, վարժություններ, երաժշտական ստեղծագործություններ, երաժշտական կատարման ընթացքում դրսևորել մասնագիտական երաժշտական ճաշակ և արտիստիզմ
37.	Կատարման չափանիշներ	1) կարողանում է կատարել գամմաներ, վարժություններ,

		<p>2) ճիշտ է հանպատրաստից ընթերցում թերթից երաժշտական օրինակներ,</p> <p>3) կարողանում է կատարել տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործություններ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> ա. պոլիֆոնիկ ստեղծագործություն բ. մեծ կտավի ստեղծագործություն գ. պիես դ. էտյուդ ե. անսամբլ և/կամ նվագակցություն զ. ստեղծագործության փոխադրում 4 ձեռքով դաշնամուրի համար <p>4) ճիշտ է մեկնաբանում (բացատրում նշանակությունը) և կատարում երաժշտական տեքստում առկա տեմպային, դինամիկ և հնչերանգային նշումները,</p> <p>5) ճիշտ է օգտագործում ոտնակները,</p> <p>6) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է երաժշտական ստեղծագործության կերպարային, ոճային, ձևաբանական, գեղագիտական նկարագրի համալիր ընկալում, երաժշտական մասնագիտական ճաշակ,</p> <p>7) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է արտիստիզմ:</p>
<p>38.</p>	<p>Ուսումնառության արդյունք 8</p>	<p>Կատարելագործել դաշնամուրային կատարողականությունը, կատարել գամմաներ, վարժություններ, երաժշտական ստեղծագործություններ, երաժշտական կատարման ընթացքում դրսևորել մասնագիտական երաժշտական ճաշակ, մեկնաբանման անհատական մոտեցում և արտիստիզմ</p>
<p>39.</p>	<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) կարողանում է կատարել գամմաներ, վարժություններ,</p> <p>2) ճիշտ է հանպատրաստից ընթերցում թերթից երաժշտական օրինակներ,</p> <p>3) կարողանում է կատարել տարբեր ժանրերի երաժշտական ստեղծագործություններ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> ա. պոլիֆոնիկ ստեղծագործություն բ. մեծ կտավի ստեղծագործություն գ. պիես դ. էտյուդ

		<p>ե. անսամբլ և/կամ նվագակցություն</p> <p>զ. ստեղծագործության փոխադրում 4 ձեռքով դաշնամուրի համար</p> <p>է. ինքնուրույն սովորած ստեղծագործություն</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում (բացատրում նշանակությունը) և կատարում երաժշտական տեքստում առկա տեմպային, դինամիկ և հնչերանգային նշումները,</p> <p>5) ճիշտ է օգտագործում ոտնակները,</p> <p>6) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է երաժշտական ստեղծագործության կերպարային, ոճային, ձևաբանական, գեղագիտական նկարագրի համալիր ընկալում, երաժշտական մասնագիտական ճաշակ, երաժշտական ստեղծագործության մեկնաբանման անհատական մոտեցում,</p> <p>7) երաժշտական կատարման ընթացքում դրսևորում է արտիստիզմ:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»		
40.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-004
41.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել արվեստի տարբեր ճյուղերի վերաբերյալ գիտելիքներ, դրանք ներկայացնելու կարողություն, նպաստել մասնագիտական երաժշտական ճաշակի զարգացմանը, աշխարհայացքի ընդլայնմանը:
42.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
43.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
44.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
45.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել արվեստի տեսակները և ժանրերը, նախնադարյան արվեստը, առաջավոր Ասիայի երկրների և հին Եգիպտոսի արվեստը
46.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում արվեստի տեսակներն ու ժանրերը,</p> <p>2) ճիշտ է նկարագրում նախնադարյան արվեստը, ճանաչում դրան բնորոշ նմուշները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում շումերական պետության մշակույթը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում Ասորեստանի հնագույն ճարտարապետությունը և որմնագրությունը,</p>

		<p>5) ճիշտ է ներկայացնում հին Եգիպտոսի մշակույթի պատմական շրջանները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում ուսումնական տեսանյութերում ընդգրկված քանդակները, փարավոնների դամբարանները:</p>
47.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել Ուրարտուի, հին Եգիպտոսի, հին Հունաստանի և հին Հռոմի մշակույթները
48.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ուրարտական մշակույթի զարգացման հիմքերը, առանձնահատկությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հին Եգիպտոսի տաճարաշինությունը, քանդակագործությունը (ընդհանուր բնութագիրը),</p> <p>3) ճիշտ է ներկայացնում եգիպտացիների նվաճումները ֆիզիկայի, քիմիայի, բժշկության, թվաբանության, երկրաչափության, աստղագիտության բնագավառներում,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հին Հունաստանի մշակույթի դերը արվեստի պատմության մեջ,</p> <p>5) ճիշտ է նկարագրում հին Հունաստանի մշակույթի պատմական շրջանները՝ հոմերոսյան, արխայիկ, դասական և հելլենիստական,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում հին Հռոմի մշակույթի առաջատար դերը անտիկ աշխարհում,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում ուսումնական տեսանյութերում ընդգրկված արվեստի նմուշները և կատարում նրանց համեմատությունը:</p>
49.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել միջնադարի, Վերածննդի, XVII-XVIII դարերի մշակույթը
50.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում միջնադարյան արվեստի բնույթը,</p> <p>2) ճիշտ է նկարագրում բյուզանդական և Կիևյան Ռուսիայի արվեստը միջնադարում,</p> <p>3) ճիշտ է բացատրում ռոմանական ոճ և գոթական ոճ հասկացությունները,</p> <p>4) ճիշտ է բնութագրում Վերածննդի արվեստը Իտալիայում, դրա տարածումը Եվրոպայի այլ երկրներում,</p> <p>5) ճիշտ է վերլուծում Վերածննդի կերպարվեստի ներկայացուցիչների ստեղծագործությունները և դասակարգում ըստ ժանրերի (կենցաղային, պեյզաժ, դիմանկար, նատյուրմորտ),</p> <p>6) ճիշտ է ներկայացնում XVII-XVIII դդ. կազմավորված գեղանկարչության դպրոցները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում բարոկկո, ռոկոկո, կլասիցիզմ ոճերը:</p>
51.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել XVIII-XX դդ. մշակույթը (արևմտաեվրոպական երկրների, Ռուսաստանի), հայ մշակույթը

52.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բնութագրում XVIII դարը որպես լուսավորչության դարաշրջան, 2) ճիշտ է բնութագրում XIX դարի հիմնական ոճական ուղղությունները (ռոմանտիզմ, ռեալիզմ), 3) ճիշտ է ներկայացնում ֆրանսիական իմպրեսիոնիզմը և ռուս պերեդվիժնիկների արվեստը, 4) ճիշտ է բնութագրում XX դարի ուղղությունները (էքսպրեսիոնիզմ, կուբիզմ, աբստրակցիոնիզմ, էքզիստենցիալիզմ, սյուրռեալիզմ, նեոկլասիցիզմ), 5) ճիշտ է ներկայացնում XX դարի երաժշտական մշակույթի ընդհանուր բնութագիրը, 6) ճիշտ է ներկայացնում հայ մշակույթի զարգացման տարբեր շրջանները (հնագույն ժամանակից մինչև մեր օրերը):
-----	----------------------------	--

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ»

53.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-005
54.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել մարդու հոգեկան կյանքի, դրա զարգացման, ընդհանուր օրինաչափությունների, գործընթացների, որակների և վիճակների մասին գիտելիքներ և դրանք ներկայացնելու կարողություն, ինչպես նաև ձևավորել դպրոցական տարիքի երեխաների հոգեկան ձևավորման և զարգացման գործընթացը ճիշտ ուղղորդելու կարողություններ:
55.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
56.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
57.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
58.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հոգեբանության դերը և նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, ֆունկցիաները և բնագավառները
59.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հոգեբանությունը որպես գիտություն, նրա զարգացման հիմնական փուլերը, 2) ճիշտ է մեկնաբանում անձի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ կիրառվող հոգեբանական մեթոդները, 3) ճիշտ է ներկայացնում հոգեբանության սկզբունքները, ֆունկցիաները, հոգեկանի ռեֆլեկտոր բնույթը, 4) ճիշտ է բացատրում հոգեբանության բնագավառները և միջառարկայական կապերը:

60.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել անձի հոգեկան կյանքը և գործունեությունը
61.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անձ, անհատ, անհատականություն, մարդ հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում անձի գործունեությունը, դրա տեսակները տարբեր տարիքային փուլերում, 3) ճիշտ է ներկայացնում անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները:
62.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել անձի ճանաչողական գործընթացները
63.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անձի ուշադրությունը, դրա տեսակները, հիմնական որակները, 2) ճիշտ է ներկայացնում դպրոցականի ուշադրությունը որպես ճանաչողափմացական գործընթաց, 3) ճիշտ է ներկայացնում զգայությունը, դրա առանձնահատկություններ, տեսակները, 4) ճիշտ է ներկայացնում դպրոցականի զգայությունները, 5) ճիշտ է ներկայացնում ընկալումները, դրա տեսակները, առանձնահատկությունները և դրանց իմացական դերը, 6) ճիշտ է ներկայացնում հիշողությունը, դրա տեսակները, հիմնական գործընթացները, 7) ճիշտ է ներկայացնում երևակայությունը, դրա տեսակները, 8) ճիշտ է ներկայացնում դպրոցական տարիքի երեխաների երևակայության առանձնահատկությունները, 9) ճիշտ է մեկնաբանում մտածողությունը, դրա հիմնական գործընթացները:
64.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել անձի գործունեության հուզականային ոլորտը
65.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում հույզերը և զգացմունքները, դրանց տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում կամքը, կամային ոլորտի դրսևորումները, հիմնական ֆունկցիաները, 3) ճիշտ է ներկայացնում սթրեսը, աֆեկտը, կիրքը, դրանք՝ իբրև հնարավոր հոգեբանական խաթարումների նախադրյալներ:
66.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել անձի որակները և առանձնահատկությունները
67.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում խառնվածքը իբրև հոգեկան որակ, դրա հոգեբանական բնութագիրը, նյարդային համակարգի համապատասխան տիպերը, 2) ճիշտ է մեկնաբանում բնավորությունը, դրա դրսևորումները, 3) ճիշտ է մեկնաբանում ընդունակությունը, դրա տեսակները, դրսևորման պայմանները,

		4) ճիշտ է ներկայացնում դիրքորոշումների կառուցվածքը, տեսակները և ֆունկցիաները,
68.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել մանկավարժական հոգեբանության կապը տարիքային հոգեբանության հետ
69.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մեկնաբանում տարիքային և մանկավարժական հոգեբանությունը, դրա մեթոդներն ու սկզբունքները, 2) ճիշտ է բացատրում տարիքային տարբեր փուլերում գտնվող երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»		
70.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-006
71.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել մանկավարժության խնդիրների, հիմնական հասկացությունների և գործառույթների, մանկավարժական գիտության և պրակտիկայի փոխադարձ կապի վերաբերյալ գիտելիքներ, դրանք ներկայացնելու կարողություն:
72.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
73.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
74.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
75.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մանկավարժություն առարկան, խնդիրները և մեթոդները
76.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մանկավարժություն առարկան, երաժշտական մանկավարժությունը, 2) ճիշտ է ներկայացնում մանկավարժության խնդիրները, 3) ճիշտ է թվում և մեկնաբանում մանկավարժության մեթոդները:
77.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել անձի զարգացումը, դաստիարակությունը և ձևավորումը
78.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում սերնդի դաստիարակության նպատակը, 2) ճիշտ է ներկայացնում անձի բազմակողմանի, ներդաշնակ զարգացման խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում երաժշտական դաստիարակության և կրթության համակարգը:
79.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել կրթական գործընթացի հիմնական սկզբունքները, մանկավարժական գործունեության հիմնահարցերը

80.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում նախնական երաժշտական կրթությունը, 2) ճիշտ է թվարկում երաժշտական դպրոցներում ուսուցման կազմակերպման ձևերը, մեթոդները, 3) ճիշտ է ներկայացնում ուսուցչի մանկավարժական ընդունակությունները, կարողությունները և հմտությունները, 4) ճիշտ է ներկայացնում ուսուցչի անձի մասնագիտական որակները, 5) ճիշտ է ներկայացնում մանկավարժական տակտիկան, մանկավարժական էթիկայի հոգեբանական հիմունքները:
81.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել երեխայի անձնավորության զարգացման և դաստիարակության խնդիրները ուսման ընթացքում
82.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում երեխայի դպրոցական կյանքի սկզբնական շրջանի առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում երեխաների տարիքային բազմակողմանի զարգացումը, 3) ճիշտ է ներկայացնում երեխայի անձնավորության զարգացումը և դաստիարակությունը ուսման ընթացքում, 4) ճիշտ է ներկայացնում երեխայի դաստիարակության և զարգացման ուղղությամբ տարվող համատեղ աշխատանքը ընտանիքում, հանրակրթական և երաժշտական դպրոցներում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»		
83.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-007
84.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել երաժշտական կարևորագույն տարրերի, լեզվի, արտահայտչական միջոցների, օտարազգի երաժշտական տերմինների վերաբերյալ գիտելիքներ, դրանք ներկայացնելու կարողություն, փոքր ծավալի երաժշտական տեքստերի կառուցվածքաբանական վերլուծություն կատարելու կարողություն:
85.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
86.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
87.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

88.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել երաժշտական հնչյուն, մետր, ռիթմ, տեմպ, չափ հասկացությունները
89.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հնչյունի հատկությունները՝ բարձրություն, տևողություն, ուժգնություն, հնչերանգ (տեմբր), 2) ճիշտ է ներկայացնում հնչյունաշարի բաժանումը օկտավաների, հնչյունների տառային և վանկային անվանումները, տարբեր բանալիներով գրառումը, ընթերցումը՝ դաշնամուրային ցուցադրությամբ, 3) ճիշտ է ներկայացնում մետր, ռիթմ, տեմպ հասկացությունները և դրանց դերը երաժշտության մեջ 4) ճիշտ է ներկայացնում պարզ և բարդ չափերը, կատարում տևողությունների խմբավորումը, 5) ճիշտ է ճանաչում բերված երաժշտական օրինակներում սինկոպաները, տրիոլները, կվինտոլները և այլ ռիթմական խմբերը:
90.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ինտերվալները, ձայնակարգ (լադ), տոնայնություն հասկացությունները
91.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ինտերվալների աստիճանային և տոնային մեծությունը, 2) ճիշտ է ներկայացնում ձայնակարգ, տոնայնության, ինտերվալի սահմանումները, 3) ճիշտ է ներկայացնում միջնադարյան ձայնակարգերը, 4) ճիշտ է կատարում ինտերվալների շրջումը, 5) ճիշտ է ներկայացնում կվարտա-կվինտային շրջանը, 6) ճիշտ է կառուցում մաժորի և մինորի տեսակները, 7) ճիշտ է կատարում մեղեդու տոնայնական փոխադրում (տրանսպոզիցիա):
92.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ինտերվալները տոնայնության մեջ, ինտերվալների լուծումը, ակորդների կառուցման սկզբունքը և տոնայնությունների ազգակցությունը
93.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ինտերվալները մաժոր և մինոր ձայնակարգերում, 2) ճիշտ է ներկայացնում ինտերվալների լուծումը, 3) ճիշտ է ձևակերպում եռահնչյունի, սեպտակորդի, նոնակորդի սահմանումները, 4) ճիշտ է կատարում ակորդների շրջումը, 5) ճիշտ է կառուցում ինտերվալներն ու ակորդները տրված հնչյունից, 6) ճիշտ է ընկալում մոդուլյացիա և շեղում հասկացությունները,

		7) ճիշտ է ներկայացնում առաջին կարգի ազգակցության տոնայնությունները:
94.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել քրոմատիզմը, մեղեդին՝ որպես երաժշտական արվեստի կարևորագույն արտահայտչամիջոցներից մեկը, մելիզմների հիմնական տեսակները, օտարազգի երաժշտական տերմինների նշանակությունը
95.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կառուցում քրոմատիկ մաժոր և մինոր գամմաները, 2) ճիշտ է ներկայացնում մեղեդի, երաժշտական թեմա, մոտիվ, ֆրագ, նախադասություն, պարբերություն հասկացությունների սահմանումները, 3) ճիշտ է ներկայացնում մելիզմների հիմնական տեսակները, 4) ճիշտ է կատարում փոքր ծավալի երաժշտական տեքստերի կառուցվածքաբանական վերլուծություն, 5) ճիշտ է ներկայացնում օտարազգի երաժշտական տերմինների նշանակությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՒՑԵԶԻՈ»		
96.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-008
97.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ զարգացնել լսողական և ստեղծագործական ունակությունները, դաստիարակել երաժշտական ընկալունակություն, ձևավորել երաժշտական մտածողություն, երաժշտական ստեղծագործության՝ թերթից հանպատրաստից ընթերցման, երաժշտական տեքստի գրառումներ կատարելու, երաժշտական խոսքի լսողական վերլուծություն կատարելու, մասնագիտական գործունեությունում ինքնուրույնություն դրսևորելու կարողություններ
98.	Մոդուլի տևողությունը	568 ժամ
99.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:
100.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
101.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ձայնակարգը (լադ) և նրա տարրերը, ձայնակարգի աստիճանների պլտերացիան (II, IV, VI աստիճանների), դիատոնիկ և քրոմատիկ ինտերվալներ հասկացությունները, անկայուն ինտերվալների լուծումները, եռահնչյունները, սեպտակորդները, սինկոպաների պարզ ձևերը, կատարել ինտոնացիոն վարժություններ, լսողական վերլուծություն, երգել, գրել թելադրություն

<p>102.</p>	<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կառուցում և երգում մաժոր և մինոր ձայնակարգերի տեսակները, 2) ճիշտ է կառուցում և երգում դիատոնիկ ձայնակարգերը (ժողովրդական և միջնադարյան), 3) ճիշտ է կատարում ձայնակարգի աստիճանների ավտերացիան (II, IV, VI) մաժորում և մինորում, 4) ճիշտ է երգում անցողիկ և օժանդակ քրոմատիկ հնչյունները, 5) ճիշտ է կառուցում և երգում քրոմատիկ գամմաներ, 6) ճիշտ է կառուցում և երգում դիատոնիկ և բնորոշ ինտերվալները հարմոնիկ ձայնակարգերում (մծց. 2, փքց. 7, մծց. 5, փքց. 4 և եռատոներ), 7) ճիշտ է կառուցում և երգում քրոմատիկ ինտերվալները, 8) ճիշտ է կատարում անկայուն ինտերվալների լուծումները, 9) ճիշտ է որոշում լսողությամբ բաղակազմ ինտերվալները, 10) ճիշտ է կառուցում և երգում եռահնչյունները, սեպտակորդները և դրանց շրջվածքները հնչյունից և տոնայնության մեջ, 11) ճիշտ է երգում ակորդային հաջորդականություններ, 12) ճիշտ է որոշում լսողությամբ ակորդային հաջորդականություններ, 13) ներկայացնում է ռիթմական տևողությունների հիմնական բաժանումները, 14) ճիշտ է ներկայացնում տարբեր ռիթմիկ պատկերներ (տրիոլներ, սինկոպաներ) պարզ և բարդ չափերում, 15) ճիշտ է երգում միաձայն համարներ (թերթից հանպատրաստից ընթերցումով, տրանսպոզիցիայով), 16) ճիշտ է երգում երկձայնություն (զուգերգով կամ մեկ ձայնի դաշնամուրային կատարմամբ), 17) ճիշտ է գրում միաձայն թելադրություններ. 8-16 տակտ, նշված ռիթմական և ինտոնացիոն առանձնահատկություններով, 18) ճիշտ է գրում երկձայն թելադրություններ. 8-10 տակտ, ինտերվալային շարադրանքով, 19) կատարում է մոտիվների և ֆրազների իմպրովիզացիա, 20) գրում է մեղեդի պարբերության ձևով:
<p>103.</p>	<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել խիտ եռաձայն և քառաձայն դասավորությամբ ակորդներ, տոնայնությունների</p>

		<p>ազգակցությունը, սինկոպաների բարդ ձևերը, կատարել տոնայնական շեղումներ և մոդուլյացիաներ դեպի I կարգի ազգակցության տոնայնություններ, ինտոնացիոն վարժություններ, լսողական վերլուծություններ, երգել, գրել թելադրություններ</p>
<p>104.</p>	<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կառուցում, երգում և լսողությամբ որոշում խիտ դասավորությամբ եռաձայն և քառաձայն շարադրանքով ակորդներ տոնայնության մեջ (եռահնչյուններ, D₇, SII₇, DVII₇, դրանց շրջվածքները), 2) ճիշտ է ներկայացնում կադանսային դարձվածքի տարատեսակները, 3) ճիշտ է երգում և կատարում հարմոնիկ հաջորդականությունների լսողական վերլուծություն (այդ թվում՝ անցողիկ D₄₆, T₄₆, VI₄₆-ները՝ անցողիկ դարձվածքներում), 4) ճիշտ է ներկայացնում տոնայնությունների ազգակցությունը, 5) ճիշտ է ներկայացնում օժանդակ D և օժանդակ S, 6) ճիշտ է կառուցում և երգում քրոմատիկ գամմաներ, 7) ճիշտ է կատարում շեղումները և մոդուլյացիաները դեպի I կարգի ազգակցից տոնայնություններ քրոմատիկ հնչյունների ներգրավմամբ, 8) ճիշտ է կատարում շեղումները և մոդուլյացիաները դեպի I կարգի ազգակցության տոնայնություններ՝ քրոմատիկ և բնորոշ ինտերվալների միջոցով, 9) ճիշտ է ներկայացնում տևողությունների ռիթմական բաժանման առանձնահատուկ ձևերը (տրիոլ, դուոլ, կվարտոլ, կվինտոլ, սեքստոլ), 10) ճիշտ է ներկայացնում սինկոպաների բարդ ձևերը, պաուզաները, 11) ճիշտ է գրում 8-12 տակտ ծավալով միաձայն թելադրություններ, 12) ճիշտ է գրում 8-12 տակտ ծավալով երկձայն թելադրություններ՝ քրոմատիկ անցողիկ և օժանդակ հնչյունների կիրառումով, տոնայնական շեղումներով, 13) ճիշտ է հանպատրաստից ընթերցում միաձայն, տրանսպոզիցիայով երաժշտական համարներ՝ նախնական վերլուծությամբ, 14) ճիշտ է երգում երկձայնություն (զուգերգով կամ մեկ ձայնի դաշնամուրային կատարմամբ),

		15) հորինում է երկրորդ ձայնը ստեղծագործական խնդիրներ լուծելիս:
105.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ակորդների ալտերացիան, պարզ բազմամետր զուգորդումները, կատարել ինտոնացիոն վարժություններ, լսողական վերլուծություններ, երգել, գրել թելադրություններ
106.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում թռիչքով քրոմատիկ հնչյունների ուշացված վերլուծումները ձայնակարգում, 2) ճիշտ է կառուցում, երգում և լսողությամբ որոշում դիատոնիկ սեկվեցիաները, 3) ճիշտ է կառուցում, երգում և լսողությամբ որոշում մոդուլյացիոն սեկվեցիաներ, 4) ճիշտ է կառուցում և երգում D₇-ի և շրջվածքների ալտերացիան, 5) ճիշտ է կառուցում և երգում ալտերացված SII₇ և շրջվածքները, 6) ճիշտ է կառուցում, լուծում և երգում D⁶, D⁶₇ և շրջվածքները, 7) ճիշտ է կառուցում և երգում շեղումներ ալտերացված ակորդների միջոցով, 8) ճիշտ է երգում և լսողությամբ վերլուծում DD ակորդային հաջորդականություններում, 9) ճիշտ է կատարում երաժշտական ստեղծագործությունների հարմոնիկ վերլուծություն, 10) ճիշտ է ներկայացնում պարզ բազմամետր զուգորդումները, 11) ճիշտ է ներկայացնում խառը չափերը, 12) ճիշտ է գրում միաձայն թելադրություններ՝ հազեցված քրոմատիզմներով, զարգացած ռիթմով 13) ճիշտ է գրում երկձայն թելադրություններ՝ զարգացած մեղեդիական գծով և բասով, 14) ճիշտ է հանպատրաստից ընթերցում միաձայն, մեղեդիական-ինտոնացիոն և ռիթմական բարդացված պատկերով երաժշտական համարներ, 15) ճիշտ է երգում պոլիֆոնիկ երկձայնություն (մեկ ձայնի դաշնամուրային կատարմամբ), 16) ճիշտ է երգում հարմոնիկ քառաձայն երաժշտական համարներ (խորալների կատարում համույթային երգեցողությամբ, մեկ ձայնի երգեցողությունը՝ մնացած ձայների նվագակցությամբ):
107.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել և կատարել տոնայնական շեղումներ և մոդուլյացիաներ դեպի II կարգի ազգակից տոնայնություններ, ինտոնացիոն վարժություններ, լսողական վերլուծություններ, երգել, գրել թելադրություններ
108.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում շեղումներ և մոդուլյացիաներ դեպի II կարգի ազգակից տոնայնություններ

		<p>քրոմատիկ հնչյունների միջոցով,</p> <p>2) ճիշտ է կատարում շեղումներ և մոդուլյացիաներ դեպի II կարգի ազգակից տոնայնություններ քրոմատիկ ինտերվալների միջոցով,</p> <p>3) ճիշտ է կառուցում և երգում ալտերացված DD-ի ակորդներ և ալտերացված S,</p> <p>4) ճիշտ է կատարում շեղումներ և մոդուլյացիաներ դեպի II կարգի ազգակից տոնայնություններ օժանդակ D-ի և օժանդակ S-ի միջոցով,</p> <p>5) ճիշտ է վերլուծում լսողությամբ մոդուլյացիոն պարբերություններ,</p> <p>6) ճիշտ է կատարում երաժշտական ստեղծագործության հարմոնիկ վերլուծություն,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում փոփոխական չափերը,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում բարդ բազմամետր զուգորդումներ,</p> <p>9) ճիշտ է գրառում երաժշտական ստեղծագործությունների մեղեդիներ,</p> <p>10) ճիշտ է գրում երկձայն թելադրություններ՝ բարդացված ձայնակարգային հիմքով, փոփոխական ձայնակարգով,</p> <p>11) ճիշտ է գրում ալտերացիայի տարբեր ձևերի կիրառմամբ երկձայն թելադրություններ,</p> <p>12) ճիշտ է գրում քրոմատիկ ընդհատված դարձվածքների կիրառմամբ երկձայն թելադրություններ,</p> <p>13) ճիշտ է գրում երկձայն թելադրություններ՝ զարգացած հյուսվածքով, մետրառոժմական բազմազանությամբ,</p> <p>14) ճիշտ է գրում խորալային տիպի հարմոնիկ քառաձայն թելադրություններ,</p> <p>15) ճիշտ է կատարում մեղեդիներ XIX դարի II կեսի կոմպոզիտորների վոկալ և գործիքային երկերից,</p> <p>16) կատարում է միաձայն վարժությունների տրանսպոզիցիա,</p> <p>17) երգում է ռոմանսներ՝ նվագակցությամբ,</p> <p>18) տրված մեղեդու համար հորինում է հարմոնիկ նվագակցություն:</p>
109.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել շեղումները և մոդուլյացիաները դեպի III կարգի ազգակցության տոնայնություններ, կատարել ինտոնացիոն վարժություններ, լսողական վերլուծություններ, երգել, գրել թելադրություններ
110.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում շեղումներ և մոդուլյացիաներ դեպի III կարգի ազգակցության

		<p>տոնայնություններ,</p> <p>2) ճիշտ է կիրառում քրոմատիկ ինտերվալները՝ դեպի III կարգի ազգակցության տոնայնություններ շեղումներում և մոդուլյացիաներում,</p> <p>3) ճիշտ է կիրառում ալտերացված ակորդները մոդուլյացիոն կառուցվածքներում,</p> <p>4) ճիշտ է կիրառում ոչ ակորդային տոներով համահնչյունները (հապադիկ, անցողիկ, օժանդակ, կանխիկ հնչյուններով ակորդներ) մոդուլյացիոն կառուցվածքներում,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում տիպական ժանրային ռիթմական դարձվածքներ,</p> <p>6) ճիշտ է գրառում բազմաձայն հյուսվածքի մեղեդին,</p> <p>7) ճիշտ է գրում հստակ մեղեդիական գծով հարմոնիկ կառուցվածքի եռաձայն թելադրություններ,</p> <p>8) ճիշտ է գրում հարմոնիկ քառաձայն թելադրություններ՝ նախնական վերլուծությամբ,</p> <p>9) ճիշտ է երգում թռիչքային քրոմատիզմներով մեղեդիներ,</p> <p>10) ճիշտ է ընթերցում հանպատրաստից՝ կատարելով տրանսպոզիցիա,</p> <p>11) երգում է ռոմանսներ՝ դաշնամուրի նվագակցությամբ,</p> <p>12) ճիշտ է երգում երկձայն համարներ՝ նվագելով մեկ ձայնը,</p> <p>13) ճիշտ է երգում եռաձայն համարներ՝ նվագելով երկու ձայնը,</p> <p>14) ճիշտ է գրում ոչ ակորդային հնչյունների կիրառումով քառաձայն հարմոնիկ թելադրություններ,</p> <p>15) տրված մեղեդու համար հորինում է հարմոնիկ նվագակցություն,</p> <p>16) կատարում է տրված մեղեդիական դարձվածքի իմպրովիզացիա:</p>
111.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել շեղումները և մոդուլյացիաները դեպի հեռավոր կարգերի ազգակցության տոնայնություններ, կատարել ինտոնացիոն վարժություններ, լսողական վերլուծություններ, երգել, գրել թելադրություններ
112.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կատարում շեղումներ և մոդուլյացիաներ դեպի հեռավոր կարգերի ազգակցության տոնայնություններ՝ անկայուն հնչյունների թռիչքով լուծումների կիրառմամբ,</p> <p>2) կատարում է երաժշտական ստեղծագործությունների ամբողջական հարմոնիկ վերլուծություն,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում բազմամետր, բարդ ռիթմական զուգորդումները և փոփոխվող չափերը,</p> <p>4) ճիշտ է գրում հարմոնիկ եռաձայն թելադրություններ,</p>

		<p>5) ճիշտ է գրում պոլիֆոնիկ (իմիտացիոն) շարադրանքով եռաձայն թելադրություններ,</p> <p>6) ճիշտ է գրում ձայների մեղեդիական ֆիգուրացիաների կիրառումով հարմոնիկ քառաձայն թելադրություններ,</p> <p>7) ճիշտ է ընթերցում հանպատրաստից միաձայն երաժշտական համարներ,</p> <p>8) երգում է տրանսպոզիցիա տարբեր ինտերվալներով,</p> <p>9) կատարում է վարժություններ Դո-ի բանալիում,</p> <p>10) երգում է ռոմանսներ՝ հանպատրաստից ընթերցմամբ, դաշնամուրի նվագակցությամբ,</p> <p>11) ճիշտ է կատարում եռաձայն վարժություններ (վոկալ և գործիքային եռաձայնության համույթային կատարում),</p> <p>12) ճիշտ է կատարում պոլիֆոնիկ եռաձայնության նմուշներ (երգում է՝ նվագելով երկու ձայնը):</p>
113.	Ուսումնառության արդյունք 7	<p>Ներկայացնել մաժորամիներային և միներամաժորային համակարգերը, էնհարմոնիկ մոդուլյացիաները, կատարել ինտոնացիոն վարժություններ, լսողական վերլուծություններ, երգել, գրել թելադրություններ</p>
114.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կատարում շեղումներ մոդուլյացիաներ դեպի հեռավոր կարգի ազգակից տոնայնություններ՝ թռիչքով քրոմատիկ հնչյուններով,</p> <p>2) ճիշտ է կառուցում մաժորամիներային և միներամաժորային համակարգերի ակորդները,</p> <p>3) ճիշտ է կատարում շեղումներ և մոդուլյացիաներ մաժորամիներային և միներամաժորային համակարգերի ակորդների միջոցով,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում էնհարմոնիզմը,</p> <p>5) ճիշտ է կառուցում և երգում էնհարմոնիկ ակորդներ,</p> <p>6) ճիշտ է կատարում էնհարմոնիկ մոդուլյացիաներ,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում ալտերացիայի բարդ ձևերը,</p> <p>8) ճիշտ է կառուցում և երգում պոլիֆոնիկցիոնալ ակորդներ, բազմատերցիային ակորդներ,</p> <p>9) ճիշտ է կառուցում և երգում ոչ տերցիային համահնչյուններ,</p> <p>10) կատարում է երաժշտական ստեղծագործության ամբողջական հարմոնիկ վերլուծություն,</p> <p>11) ճիշտ է գրում հարմոնիկ և պոլիֆոնիկ (իմիտացիոն, կոնտրաստային) կերտվածքի եռաձայն</p>

		<p>թելադրություններ,</p> <p>12) ճիշտ է գրում քառաձայն թելադրություններ՝ բարդացված հարմոնիկ լեզվով, զարգացած մեղեդիական նկարագրով,</p> <p>13) ճիշտ է երգում մեղեդիներ XX դարասկզբի կոմպոզիտորների վոկալ և գործիքային ստեղծագործություններից,</p> <p>14) ճիշտ է գրում ժամանակակից կոմպոզիտորների մեղեդիական մտածողության միաձայն թելադրություններ,</p> <p>15) կատարում է ամբողջական վոկալ ստեղծագործություն՝ տրանսպոզիցիայով,</p> <p>16) երգում է ռոմանսներ (նվագակցությամբ),</p> <p>17) ճիշտ է կատարում է պոլիֆոնիկ եռաձայնության նմուշներ (երգում է՝ նվագելով երկու ձայնը),</p> <p>18) ճիշտ է ընթերցում հանպատրաստից եռաձայն համարներ,</p> <p>19) ճիշտ է երգում պոլիֆոնիկ քառաձայնության և բազմաձայնության նմուշներ (համույթային կատարմամբ):</p>
115.	Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել համահնչյունների տարբեր տեսակները հայ երաժշտության մեջ, կատարել ինտոնացիոն վարժություններ, լսողական վերլուծություններ, երգել, գրել թելադրություններ
116.	Կատարման չափանիշներ	<p>1) երգում է չդրսևորված տոնիկական կենտրոնով ինտոնացիոն վարժություններ,</p> <p>2) երգում է պոլիլադային հյուսվածքով երաժշտական համարներ,</p> <p>3) ճիշտ է որոշում առանձին շերտերի տոնայնությունները բազմատոնայնության մեջ,</p> <p>4) ճիշտ է կառուցում ոչ տերցային համահնչյուններ, պոլիտոնալ ակորդներ,</p> <p>5) ներկայացնում է կվարտակորդները և կվինտակորդները հայ երաժշտության մեջ, սեկունդային շերտավորումով ակորդները,</p> <p>6) ճիշտ է կատարում մոդուլյացիաներ հնարավոր բոլոր տարբերակներով,</p> <p>7) ճիշտ է կատարում հանպատրաստից ընթերցմամբ վերը նշված բովանդակությանը համապատասխանող միաձայն, երկձայն, եռաձայն, քառաձայն նմուշներ (երգում՝ մնացած ձայների դաշնամուրային կատարմամբ կամ անսամբլային կատարմամբ),</p>

		8) ճիշտ է գրում միաձայն, եռաձայն, բազմաձայն, ձայների փոփոխվող քանակով, փոփոխական հյուսվածքով, տարբեր հյուսվածքների համադրումներով թելադրություններ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՐՄՈՆԻԱ»		
117.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-009
118.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել մեղեդու և բասի ներդաշնակման, հարմոնիկ հաջորդականություններ դաշնամուրով կատարելու, երաժշտական գրականության օրինակների հարմոնիկ վերլուծության և ոչ ծավալուն ստեղծագործություններ հորինելու ունակություններ, բնականոն ձայնատարության և ներդաշնակման ճաշակ:
119.	Մոդուլի տևողությունը	267 ժամ
120.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ԵՐՏ-5-16-007 «Երաժշտության տարրական տեսություն» մոդուլի ուսումնասիրությունը:
121.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
122.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հարմոնիան՝ իբրև հասկացություն և երևույթ, նրա դերը երաժշտական ամբողջության մեջ, «ձայնակարգ» հասկացությունը հարմոնիայի տեսակետից, «ձայնատարություն» հասկացությունը, մեղեդու և բասի ներդաշնակման հիմնական սկզբունքները, երաժշտական կառուցվածքի բաղկացուցիչ մասերը, նշված թեմաների շուրջ լուծել խնդիրներ, կատարել հարմոնիկ վերլուծություններ, նվագել հարմոնիկ դարձվածքներ պարբերության ձևով
123.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է հարմոնիայի դերը երաժշտական ամբողջության մեջ, 2) կարողանում է ներկայացնել «ուղղահայաց» և «հորիզոնական» (ակորդ և մեղեդի) հասկացությունները հարմոնիայում, 3) կարողանում է ներկայացնել ձայների անվանումները, գրառման ձևը, ակորդի դասավորությունը և մեղեդային դիրքը քառաձայնության մեջ, 4) կարողանում է ներկայացնել ձայնակարգային համակարգը, ֆունկցիոնալությունը, ակորդների ֆունկցիոնալ համակարգը, գլխավոր աստիճանների եռահնչյունները, ֆունկցիոնալ դարձվածքները,

		<p>5) կարողանում է ներկայացնել ձայների շարժման ձևերը, ակորդների միացումը, հարմոնիկ և մեղեդային միացումները, ակորդի փոխադրումը, տերցիային տոների թռիչքները,</p> <p>6) կարողանում է ներկայացնել կադանսային կվարտսեքստակորդը,</p> <p>7) կատարում է մեղեդու և բասի ներդաշնակում,</p> <p>8) կարողանում է ներկայացնել երաժշտական պարբերությունը, նախադասությունը և կադենցիան:</p>
124.	Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել սեքստակորդները, անցողիկ և օժանդակ կվարտսեքստակորդներ, D₇-ը և նրա շրջվածքները, մաժորի և հարմոնիկ մինորի լրիվ ֆունկցիոնալ համակարգը, II աստիճանի սեքստակորդը և II աստիճանի եռահնչյունը, հարմոնիկ մաժորը, հարմոնիկ S-ն, հակասումը, նշված թեմաների շուրջ լուծել խնդիրներ, կատարել հարմոնիկ վերլուծություններ, նվագել հարմոնիկ դարձվածքներ պարբերության ձևով</p>
125.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կատարում սեքստակորդների միացումը եռահնչյունների հետ և երկու սեքստակորդների միացումը (սահուն ձայնատարությամբ, թռիչքներով),</p> <p>2) կարողանում է ներկայացնել անցողիկ և օժանդակ կվարտսեքստակորդները,</p> <p>3) կարողանում է ներկայացնել D₇-ը և նրա շրջվածքները, D₇-ի դերը եզրափակիչ կադանսում,</p> <p>4) կարողանում է կիրառել D₇-ի շրջվածքները կառուցվածքի ներսում, թռիչքներով լուծումները,</p> <p>5) կարողանում է ներկայացնել բնական մաժորի և հարմոնիկ մինորի լրիվ ֆունկցիոնալ համակարգը, օժանդակ աստիճանների եռահնչյունները, տերցիային հարաբերակցությունը,</p> <p>6) կարողանում է ներկայացնել II աստիճանի սեքստակորդը և SII եռահնչյունը,</p> <p>7) կարողանում է ներկայացնել հարմոնիկ մաժորը, հարմոնիկ S-ն, հակասումը:</p>
126.	Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել VI աստիճանի եռահնչյունը, սուբդոմինանտսեպտակորդ (SII₇), շրջվածքները, ձգտող սեպտակորդները (DVII₇), շրջվածքների կիրառումը T, S, D ակորդներից հետո, դոմինանտոնակորդը (D₉), դոմինանտային խմբի սակավ հանդիպող ակորդները, բնական մինորը փոյուզիական դարձվածքներում, նշված թեմաների շուրջ լուծել խնդիրներ, կատարել հարմոնիկ վերլուծություններ, նվագել հարմոնիկ դարձվածքներ պարբերության ձևով պարբերության ձևով</p>
127.	Կատարման չափանիշներ	<p>1) կարողանում է ներկայացնել VI աստիճանի եռահնչյունը, որպես ձայնակարգի ներքևի միդիանտա, նրա միացումը տերցիային հարաբերակցության եռահնչյունների հետ,</p>

		<ol style="list-style-type: none"> 2) կատարում է VI աստիճանի եռահնչյունը D-ային ակորդներից հետո, 3) կատարում է ճիշտ ձայնատարություն D-VI₃₅ ընդհատված դարձվածքում, 4) ճիշտ է կատարում SII₇ լուծումները D-ային խմբի ակորդների մեջ. անցումը դեպի K₄₆, անցողիկ կվարտսեքստակորդների շրջապատումը SII₇-ի շրջվածքներով, 5) կարողանում է ներկայացնել DVII₇ շրջվածքների կիրառումը T, S, D ակորդներից հետո, 6) կարողանում է ներկայացնել DVII₇ լուծումները T-ի մեջ և D₇ շրջվածքների մեջ (ներֆունկցիոնալ լուծում), 7) կարողանում է ներկայացնել DVII₇-ը և շրջվածքները անցողիկ դարձվածքներում, 8) ճիշտ է կատարում D₉-ի նախապատրաստումը, լուծումը, 9) ճիշտ է օգտագործում D₉-ը որպես հապաղում D₇-ի համար, 10) ճիշտ է կատարում սուբդոմինանտնոնակորդը (SII₉) կիրառումը մաժորում, 11) կարողանում է ներկայացնել DVII₆ և DTIII աստիճանի եռահնչյունը մաժորում, նրանց կիրառման պայմանները, կրկնապատկումը և ձայնատարությունը, 12) կարողանում է ներկայացնել սեքստայով դոմինանտայի (D⁶) օգտագործումը, որպես հապաղում դեպի կվինտային տոն, 13) կարողանում է ներկայացնել D⁶, որտեղ սեքստան հանդես է գալիս իբրև կանխիկ T կամ VI աստիճանի եռահնչյուն՝ լուծվելիս, 14) կարողանում է փոյուզիական տետրախորդը ներդաշնակել մեղեդիում և բասում, 15) կարողանում է ներկայացնել բնական III և բնական VI աստիճանների եռահնչյունները և VII₆-ը, 16) կարողանում է ներկայացնել T սեպտակորդը և նրա շրջվածքները փոյուզիական դարձվածքում, 17) կարողանում է նվագել փոյուզիական դարձվածք:
128.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել դիատոնիկ սեկվենցիաները, քրոմատիզմը և նրա տեսակները, քրոմատիկ համակարգը, մոդուլյացիան դեպի առաջին կարգի ազգակից տոնայնություններ, նշված թեմաների շուրջ լուծել խնդիրներ, կատարել հարմոնիկ վերլուծություններ, նվագել հարմոնիկ դարձվածքներ պարբերության ձևով
129.	Կատարման չափանիշներ	1) կարողանում է ներկայացնել սեկվենցիոն մոտիվը, օղակների կառուցվածքը, ինտերվալային

		<p>քայլերը, շարժման ուղղությունը, ակորդների ֆունկցիոնալ հարաբերակցությունը սեկվենցիաներում,</p> <ol style="list-style-type: none"> 2) կարողանում է ներկայացնել օժանդակ սեպտակորդները (սեկվենցակորդներ), 3) կարողանում է ներկայացնել քրոմատիզմը և նրա տեսակները, ակորդային և ներձայնակարգային ալտերացիան, ալտերացված S-ն, 4) ճիշտ է օգտագործում կրկնակի դոմինանտան կադանսում, 5) կարողանում է ներկայացնել կրկնակի դոմինանտայի դերն ու նշանակությունը որպես ալտերացված S, 6) ճիշտ է օգտագործում կրկնակի դոմինանտան, որպես շեղում V աստիճանի տոնայնություն, 7) ճիշտ է օգտագործում կրկնակի դոմինանտան կառուցվածքի ներսում, նրա անցումը դոմինանտային խմբի ակորդների մեջ, 8) ճիշտ է օգտագործում կրկնակի դոմինանտայի անցումը հարմոնիկ II₇-ի և նրա շրջվածքների մեջ, 9) ճիշտ է օգտագործում ալտերացիան կրկնակի դոմինանտային ակորդներում (մեծացված սեքստայով, ակորդների էնհարմոնիզմը), 10) գիտի քրոմատիկ համակարգը, տոնայնական շեղումները, օժանդակ D-ի և օժանդակ S-ի կիրառումը շեղումներում, շեղումների հերթակարգը, 11) գիտի քրոմատիկ սեկվենցիաները և դրանց կառուցվածքը, 12) գիտի մոդուլյացիաների տեսակները և միջոցները, 13) ճիշտ է կատարում մոդուլյացիա դեպի առաջին կարգի ազգակից տոնայնություններ, 14) կարողանում է կատարել ընդհանուր ակորդի հավասարեցում, միջնորդող և մոդուլացնող ակորդներ, 15) կարողանում է կատարել շեղում դեպի ընդհանուր ակորդի տոնայնություն և հաստատում՝ կադանսում, 16) նվագում է ութ տակտային պարբերությամբ մոդուլյացիաներ:
130.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել մոդուլյացիան դեպի երկրորդ կարգի ազգակից տոնայնություններ, ոչ ակորդային հնչյունները (մեղեդիական ֆիգուրացիաներ), նշված թեմաների շուրջ լուծել խնդիրներ, կատարել հարմոնիկ

		վերլուծություններ, նվազել հարմոնիկ դարձվածքներ պարբերության ձևով
131.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ներկայացնել երկրորդ կարգի ազգակից տոնայնությունները, 2) կատարում է անցում միջնորդող տոնայնության ակորդի միջոցով, 3) կարողանում է կատարել մոդուլյացիա աստիճանաբար, 4) կարողանում է ներկայացնել ոչ ակորդային հնչյունները, նրանց դասակարգումը, հապաղիկ և անցողիկ (դիատոնիկ և քրոմատիկ) հնչյունները, օժանդակ և կանխիկ հնչյունները, 5) ճիշտ է օգտագործում ոչ ակորդային հնչյունները երաժշտական հյուսվածքում, 6) ճիշտ է ներկայացնում ոչ ակորդային հնչյունները մեղեդու ձևավորման մեջ, 7) նվագում է մոդուլյացիաներ դեպի երկրորդ կարգի ազգակից տոնայնություններ, ոչ ակորդային հնչյուններ:
132.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ներտոնայնական ալտերացիան, սուբոմինանտային խմբի ակորդների ալտերացիան, ձայնառությունը (պեդալ), մոդուլյացիան դեպի երրորդ կարգի ազգակից տոնայնություններ, աստիճանաբար կատարվող մոդուլյացիան, մոդուլյացնող սելվենցիաները, նշված թեմաների շուրջ լուծել խնդիրներ, կատարել հարմոնիկ վերլուծություններ, նվազել հարմոնիկ դարձվածքներ պարբերության ձևով
133.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է կատարել ձայնակարգի երկրորդ աստիճանի ալտերացիան դոմինանտային ակորդներում՝ իբրև կվինտային տոնի բարձրացում և իջեցում, 2) կարողանում է կատարել ձայնակարգի չորրորդ աստիճանի ալտերացիան, 3) կարողանում է կատարել ձայնակարգի իջեցված II աստիճանը՝ որպես իջեցված պրիմային տոն II սեքստակորդի, II, իջեցված պրիմայով, 4) կարողանում է ներկայացնել ձայնակարգի IV և II աստիճանների բարձրացման զուգորդված ձևերը՝ իբրև կրկնակի ալտերացիա S-ային ակորդների կազմում 5) կատարում է մոդուլյացիա դեպի երրորդ կարգի ազգակից տոնայնություններ, 6) կարողանում է ներկայացնել տոնայնական պլանի կառուցման սկզբունքները և կատարում է անցում հարմոնիկ S-ի (մաժորում) և հարմոնիկ D-ի (մինորում) միջոցով՝ դեպի 3-5 նշանի տարբերությամբ տոնայնություններ,

		<p>7) կարողանում է կատարել մոդուլացիա՝ աստիճանաբար՝ 6 նշանով տարբերվող տոնայնություններ,</p> <p>8) կարողանում է ներկայացնել մոդուլացիոն սեկվենցիաների դերը տոնայնական կենտրոնի կայացման մեջ:</p>
134.	Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել էնհարմոնիկ մոդուլացիան, փոքրացված սեպտակորդի էնհարմոնիզմը, մաժորամինորային և մինորամաժորային համակարգերը, նշված թեմաների շուրջ լուծել խնդիրներ, կատարել հարմոնիկ վերլուծություններ, նվագել հարմոնիկ դարձվածքներ պարբերության ձևով
135.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է կատարել էնհարմոնիկ մոդուլացիա, ներկայացնել էնհարմոնիզմը որպես երևույթ, 2) կարողանում է ներկայացնել էնհարմոնիզմի տեսակները, 3) կիրառում է էնհարմոնիկ մոդուլացիան երաժշտական ձևում, 4) կարողանում է կատարել մոդուլացիա D₇-ի էնհարմոնիզմի միջոցով, 5) կարողանում է ներկայացնել փոքրացված սեպտակորդի էնհարմոնիզմը և կատարում է մոդուլացիա նրա միջոցով, 6) ճիշտ է որոշում փոքրացված սեպտակորդի մուտքը առաջին տոնայնության մեջ, նրա տոների էնհարմոնիկ փոխարինումը և լուծումը նոր տոնայնության մեջ, 7) ճիշտ է որոշում մի ձայնակարգի հարստացումը մյուսի ակորդներով՝ ըստ համակարգում՝ երկու տոնիկաներից մեկի գերակշռման, 8) ճիշտ է կատարում մոդուլացիա մաժորամինորային և մինորամաժորային համակարգերի ակորդների միջոցով:
136.	Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել էլիպսիսը, ժամանակակից հարմոնիկ լեզվամտածողության առանձնահատկությունները, հայկական ձայնակարգերը և հարմոնիկ լեզվամտածողությունը դրանցում, լուծել խնդիրներ, կատարել հարմոնիկ վերլուծություն, նվագել հարմոնիկ դարձվածքներ պարբերության ձևով
137.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է մեկնաբանել էլիպսիսը որպես երևույթ, բնութագրում այն, նշում կիրառման տեղը երաժշտական կառուցվածքում, 2) կարողանում է ներկայացնել էլիպսիսի դարձվածքների հնարավոր ձևերը տարբեր դարաշրջանների և տարբեր ոճերի երաժշտության մեջ,

		<p>3) կարողանում է ներկայացնել ժամանակակից հարմոնիկ լեզվամտածողության առանձնահատկությունները,</p> <p>4) կարողանում է ներկայացնել հայկական ձայնակարգերը և հարմոնիկ լեզվամտածողությունը դրանցում:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»		
138.	Մոդուլի դասիչը	ԵՐՏ-5-16-010
139.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել երաժշտական ստեղծագործությունների ձևի, բովանդակության, երաժշտական երկերի կառուցվածքի ձևավորման, ձևի և բովանդակության միասնության հարցերի վերաբերյալ գիտելիքներ, դրանք ներկայացնելու, երաժշտական ստեղծագործություններ վերլուծելու կարողություններ:
140.	Մոդուլի տևողությունը	108 ժամ
141.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ԵՐՏ-5-16-007 «Երաժշտության տարրական տեսություն» մոդուլի ուսումնասիրությունը:
142.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
143.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել երաժշտական արվեստի դերը, երաժշտական բովանդակություն, ձև, կերպար, ոճ, ժանր հասկացությունները, երաժշտական լեզվի տարրերը և պարզ երաժշտական ձևերը
144.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում երաժշտական արվեստի դերը դարաշրջանների գաղափարական հիմքով ձևավորված հասարակական կյանքում, նրա գեղագիտական և դաստիարակչական նշանակությունը,</p> <p>2) ճիշտ է ընկալում ձևի և բովանդակության միասնությունը՝ որպես ավարտուն երաժշտական կառուցվածք, և երաժշտական կերպարը՝ որպես նատուրալիզմից տարբերվող երևույթ,</p> <p>3) ճիշտ է մեկնաբանում երաժշտական ոճ և ժանր հասկացությունները,</p> <p>4) ճիշտ է բնութագրում երաժշտական լեզվի մեղեդի, մոտիվ, ֆրագ, ձայնակարգ, մետրաոլիթմ, ռեգիստր, բարձրակետ, հարմոնիա, դինամիկա, տեմբր, տեմպ, արտիկուլացիա</p>

		<p>հասկացությունները, դրանց նշանակությունը՝ որպես ստեղծագործության ձևակազմավորող գործոն,</p> <p>5) ճիշտ է որոշում հանձնարարված ստեղծագործությունների երաժշտական ֆակտուրան,</p> <p>6) ճիշտ է դասակարգում ըստ ժանրերի ծրագրով նախատեսված երաժշտական ստեղծագործությունները,</p> <p>7) ճիշտ է կատարում ծրագրով նախատեսված երաժշտական ստեղծագործությունների վերլուծություն՝ վերը նշված երաժշտաարտահայտչամիջոցների առումով,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում հետևյալ կառուցվածքները՝ պարբերություն, պարզ երկմաս ձև, պարզ եռամաս ձև, դրանց տեսակներն ու կիրառման ոլորտը,</p> <p>9) ճիշտ է կատարում երաժշտական ստեղծագործությունների վերլուծություն:</p>
145.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել բարդ երաժշտական ձևերը, վոկալ և վոկալ-գործիքային երաժշտության կառուցվածքային որոշ առանձնահատկությունները
